

ԴԻԱԲԵՏԻԿ ՌԵՏԻՆՈՊԱԹԻԱՅՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է դիաբետիկ ռետինոպաթիայի արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել դիաբետիկ ռետինոպաթիայով պացիենտների բուժման արդյունքները ներառյալ կյանքի որակը:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Ասոցիացիայի և մասնավորապես Ս.Վ.Մալայանի անվան Ակնաբուժական կլինիկայի Վիտրեոռետինալ բաժանմունքի և ԵՊԲՀ-ի Ակնաբուժության ամբիոնի աշխատակիցների կողմից: Այս փաստաթղթի հիմք են հանդիսացել International Council of Ophthalmology (ICO) –ի Guidelines for Diabetic Eye Care Updated 2017-ը <http://www.icoph.org/downloads/ICOGuidelinesforDiabeticEyeCare.pdf> և AAO American Academy of Ophthalmology Preferred Practice Pattern® Guidelines <https://www.aao.org/preferred-practice-pattern/diabetic-retinopathy-ppp-updated-2016> միջազգային ուղեցույցների նյութերը: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման GRADE 2 համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE) և Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցերի համացանցի (Scottish Intergollegiate Guideline Network – SIGN) ապացույցների դասակարգումը: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի ակնաբույժների միության կողմից (արձանագրությունը կցվում է):

Ուղեցույցը նախատեսված է հիմնականում ակնաբույժների, որոշ առումներով նաև ընտանեկան բժիշկների, էնդոկրինոլոգների ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա ուղեցույցում լուսաբանվել են դիաբետիկ ռետինոպաթիայի սահմանումների, համաճարակաբանության, ռիսկի գործոնների, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, պահպանողական և վիրահատական բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Ձևակերպվել են խորհուրդներ: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները:

Հետևություններ

Բազմաբնագավառ մոտեցումը և ապացուցողական խորհուրդներին հետևելը դիաբետիկ ռետինոպաթիայով տառապող պացիենտների ելքերի բարելավման բանալիներն են: Տեղայնացված բուժական գործելակարգերի և ընթացակարգերի կիրառումը պետք է ձգտի հասնել պացիենտների բուժման ելքերի չափելի բարելավումների:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցեր, միկրոանևրիզմա, արյունազեղում, փափուկ և կոշտ էքսուդատներ, հեմոֆթալմ, մակուլյար այրուց, պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա, ֆոտոլազեր կոգուլյացիա, ինտրավիտրէալ ներարկումներ

Պատասխանատու համակարգող

ՀՀԱՆ գլխավոր ակնաբույժ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ակնաբուժության աբմիոնի վարիչ, Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի տնօրեն, ք.գ.դ., պրոֆ. Ա.Ս. Մալայան:

Աշխատանքային խմբի անդամներ

- Վարդանյան Ա.Հ., ք.գ.դ., Ս.Վ. Մալայանի անվան Ակնաբուժական կլինիկայի Վիտրեոռետինալ բաժանմունքի վարիչ, ԵՊԲՀ-ի Ակնաբուժության ամբիոնի պրոֆեսոր
- Ադամյան Տ.Կ., Ս.Վ. Մալայանի անվան Ակնաբուժական կլինիկայի Վիտրեոռետինալ բաժանմունքի բժիշկ , ԵՊԲՀ-ի Ակնաբուժության ամբիոնի դասախոս
- Շահնազարյան Հ.Գ., Ս.Վ.Մալայանի անվան Ակնաբուժական կլինիկայի Վիտրեոռետինալ բաժանմունքի բժիշկ
- Մատինյան Ս.Ի, ԵՊԲՀ-ի Ակնաբուժության ամբիոնի դասախոս

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին (հայտարարագրերը կցվում են): Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես առաջնային բուժօգնության օղակում, այնպես էլ մասնագիտացված կլինիկաներում: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Համաճարակաբանություն

Ռիսկի գործոններ

Կանխարգելում

Տեսողական ֆունկցիաները և կայնքի որակը

Վարման մարտավարություն

Ախտորոշում

Բուժում

Գրականության ցանկ

Հավելված 1. Ապացույցների դասակարգման համակարգեր

Հապավումներ

ԴՄԱ՝ Դիաբետիկ մակուլյար այտուց

ԴՌ՝ Դիաբետիկ ռետինոպաթիա

հակաԱԷԱԳԸ՝ Անոթների էնդոթելի աճի գործոնը ընկճող (antiVEGF)

ՆՆԱ՝ Նորագոյացած անոթներ այլ տեղերում

ՇԴ՝ Շաքարային դիաբետ

ՈՊԴՌ՝ Ոչ պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա

ՊԴԴ՝ Պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա

ՊՖԼԿ՝ Պանռետինալ ֆոտոլազերկոագուլյացիա

ՏՆՆ՝ Տեսողական նյարդի նորագոյացած անոթներ

ՏՆՍ՝ Տեսողական նյարդի սկավառակ

ՏՍ՝ Տեսողության սրություն

ՕԿՏ՝ Օպտիկ կոհերենտ տոմոգրաֆիա

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՀՀԱՆ՝ Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարություն

antiVEGF - Anti-vascular endothelial growth factor

GRADE(Grading of Recommendations Assesment, Development and Evalution)՝

Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը

SIGN(Scottish Intergollegiate Guideline Network)՝ Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցուցչերի համացանց

ICO(International Council of Ophthalmology)՝ Միջազգային Ակնաբուժական Հանդես

AAO(American Academy of Ophthalmology)՝ Ամերիկյան Ակնաբուժական Ակադեմիա

Նախաբան

Շաքարային դիաբետը լայն տարածում գտած նյութափոխանակության խախտման հետ կապված հիվանդություն է, որը բնութագրվում է տարբեր աստիճանի արտահայտված շարունակական հիպեգլիկեմիայով, որը զարգանում է ի պատասխան էնդոգեն ինսուլինի քանակի կամ գործունեության նվազմանը:

Շաքարային դիաբետի միկրոանոթային բարդություններից է դիաբետիկ ռետինոպաթիան, որը հանդիսանում է զարգացած և զարգացող երկրներում բնակչության կուրության հիմնական պատճառը: Ըստ միջազգային վիճակագրական տվյալների շաքարային դիաբետով տառապող հիվանդների 1/3-ի մոտ ախտորոշվում է դիաբետիկ ռետինոպաթիա: ԴՌ –ի տարբեր աստիճանի ախտահարում ունեցող հիվանդների մոտ փոխվում է կյանքի, ֆիզիկական, էմոցիոնալ, սոցիալական բարեկեցության մակարդակը, որի արդյունքում ավելանում են նաև նրանց համար ծախսվող առողջապահական ռեսուրսները:

Կլինիկական հետազոտությունները ցույց են տվել, որ արյան մեջ շաքարի, արյան լիպիդների մակարդակի և արյան ճնշման օպտիմալ վերահսկողությունը կարող են նվազեցնել ԴՌ-ի զարգացումն ու հարաճումը: Ժամանակին կատարված ցանցաթաղանթի ֆոտոլազերկոագուլյացիան, ինչպես նաև անոթների էնդոթելիալ աճի գործոնի (VEGF) ինհիբիտորների (ընկճողների) ճիշտ օգտագործումը կարող են կանխել տեսողության կորուստը՝ հատկապես դիաբետիկ մակուլյար այտուցի ժամանակ: Քանի որ տեսողության սրությունը կարող է շատ տուժած չլինել ԴՌ-ի վաղ փուլերում, ուստի դիաբետով պացիենտների կանոնավոր հետազոտումը կարող է կանխել բարդությունների առաջացումը: Սույն ուղեցույցի խնդրիներն են՝

- լուսաբանել դիաբետիկ ռետինապաթիայի ախտորոշման հիմնահարցերը
- գնահատել դիաբետիկ ռետինապաթիայի ազդեցությունը տեսողական ֆունկցիաների, ֆունկցիոնալ հնարավորությունների և պացիենտի կյանքի որակի վրա
- տեղեկացնել պացիենտին տեսողության և ֆունկցիոնալ ակտիվության վրա դիաբետիկ ռետինապաթիայի ազդեցության, կլինիկական ընթացքի մասին, լազերային

միջամտության, ինտրավիտրէալ ներարկումների, վիրաբուժության առավելությունների ու ռիսկերի և բուժման այլընտրանքային մեթոդների մասին այնպես, որ նա ինֆորմացված ընտրության հնարավորություն ունենա

- պացիենտի հետ համատեղ մշակել բուժման արդյունավետության ցուցանիշներ
- ֆունկցիոնալ բարելավման հավանականությունների դեպքերում պացիենտի համաձայնությամբ որոշել վիրաբուժական միջամտությունների ցուցումները

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանությունը

Սույն Ուղեցույցը մշակվել է Հայաստանի ակնաբուժների միության կողմից: Տեղայնացման /ադապտացիայի սկզբնաղբյուրներն են հանդիսացել <<International Council of Ophthalmology >>-ի ICO Guidelines for Diabetic Eye Care 2017-ը և <<American Academy of Ophthalmology>> -ի Diabetic Retinopathy PPP - Updated 2016-ը: Գրականական աղբյուրները ընտրվել են բանալի բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու:

Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը Grade 2 համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation) և Շոտլանդական միջկոլլեգիալ խմբի կլինիկական ուղեցույցերի համացանցի (Scottish Intergollegiate Guideline Network - SIGN) ապացույցների դասակարգումը: GRADE համակարգը դասում է բոլոր ցուցումները որպես «ուժեղ» և «թույլ», որոնց տրվում են համապատասխանաբար «1» և «2» արժեքները: Փաստորեն,

ցուցումների ուժը արտահայտում է իրենց համոզվածությունը առավելությունների և հնարավոր բարդությունների կամ ծախսերի հաշվեկշռի վերաբերյալ:

Տեղայնացման/ադատպատցիայի աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս:

Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման Հայաստանի ակնաբույժների միության անդամների կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

1. Դիաբետով պացիենտներին անհրաժեշտ է կատարել ակնահատակի դիտում

(II +, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

I տիպի շաքարային դիաբետով պացիենտներին պետք է կատարել ակնահատակի զննում դիաբետը հայտնաբերվելուց 5 տարի անց: II տիպի դեպքում՝ ախտորոշման հաստատումից անմիջապես հետո պետք է կատարել ակնահատակի զննում

2. Դիաբետով տառապող հղիների ակնահատակի զննում

(II +, բարձր որակ, խիստ ցուցում)

Հիմնավորում

Կանայք, որոնց շրջանում առաջին անգամ ախտորոշվում է դիաբետ հղիության ժամանակ, ակնահատակի զննման կարիք չունեն, ԴԴ առաջանալու ռիսկը մեծ չէ:

Սակայն դիաբետով հիվանդ կանայք, որոնք հղիանում են, պարտադիր պետք է ենթարկվեն ակնահատակի զննման հղիության վաղ շրջաններում:

3. **Կարգավորել HbA1c – ի մակարդակը**

(I++ ,**բարձր որակ, խիստ ցուցում**)

Հիմնավորում

Քանի որ արյան մեջ HbA1c-ի քանակի ավելացման դեպքում պացիենտի մոտ մեծանում է պրոլիֆերատիվ փոփոխությունների զարգացման հավանականությունը և արագությունը, ուստի խորհուրդ է տրվում HbA1c –ի մակարդակը պահել 7 %-ի վրա ,որոշ դեպքերում 6,5 %-ի վրա, որպեսզի հնարավորինս կանխենք հիվանդության պրոգրեսիվումը:

4. **Հիպերտենզիայի ինտենսիվ վերահսկողություն**

(II+ + , **միջին որակ, չափավոր ցուցում**)

Հիմնավորում

Հիպերտոնիայի հետևանքով վնասվում է անոթների պատի ամբողջականությունը արդեն իսկ վնասված անոթի պատի թափանցելիության պայմաններում, որը բերում է նոր արյունազեղումների առաջացմանը և ԴԲ-ի պրոգրեսիվմանը:

5. **Հիպերլիպիդեմիայի վերահսկում անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար**

(II+ + , **միջին որակ, չափավոր ցուցում**)

Հիմնավորում

Հիպերլիպիդեմիան բերում է արյան մածուցիկության մեծացման և ավելացման, որի հետևանքով ակտիվանում է թրոմբոգոյացումը, մակարդուկների առաջացումը, արյունազեղումների ավելացումը, որն էլ իր հերթին խորացնում է ռետինոպաթիան:

6. Ֆոտոլազերկոագուլյացիա

(I++,**բարձր որակ, խիստ ցուցում**)

Հիմնավորում

Ժամանակին կատարված ՖԼԿ-ն կանխում է ցանցաթաղանթի հյուսվածքում առաջացող հիպօքսիան և իշեմիան, որի հետևանքով դանդաղում է ցանցաթաղանթի հյուսվածքում պրոլիֆերատիվ փոփոխությունների առաջացումը:

7. Ինտրավիտրէալ ներարկումներ

(I++,**բարձր որակ, խիստ ցուցում**)

Հիմնավորում

ՀակաԱԷԱԳԸ գործոնների կիրառումը կանխում է աչքի հյուսվածքներում նորագոյացող անոթների առաջացումը ,որոնք հանդիսանում են նոր արյունազեղումների ,արյունահոսությունների առաջացման պատճառ,որի հետևանքով մեծանում է հյուսվածքների հիպօքսիան և զարգանում են պրոլիֆերատիվ փոփոխություններ:

Համաճարակաբանություն

Շատ երկրներում ԴԴ –ն է հանդիսանում ամենահաճախ կուրության բերող պատճառը աշխատունակ չափահաս անձանց շրջանում: Գերվերլուծության տվյալներով ԱՄՆ-ում , Ավստրալիայում,Եվրոպայում և Ասիայում 3-ից 1-ի մոտ (34.6%) ` առկա է ԴԴ –ի որևէ ձևը:Նշվում է նաև , որ 10-ից 1-ի մոտ (10.2%) տեսողության սպառնալիքով ուղեկցվող ԴԴ (DR) կամ դիաբետիկ մակուլյար այտուց (DME): 2010 թ.-ի տվյալներով աշխարհի դիաբետով հիվանդ բնակչության ավելի քան 92 մլն. –ի մոտ առկա է ԴԴ –ի այս կամ այն ձևը,17 մլն.-ի մոտ ՊԴԴ, 20 մլն.-ի մոտ դիաբետիկ մակուլյար այտուց և 28 մլն.-ը ունի տեսողության սպառնալիքով ուղեկցվող ԴԴ:

ԴԴ-ն զարգանում է աստիճանաբար և կապված է արյան մեջ շաքարի ,լիպիդների քանակի և արյան ճնշման վատ վերահսկողության հետ:Որքան երկար է ՇԴ –ի տևողությունը,որքան վատ է կազմակերպված վերջինիս վերահսկողությունը, այնքան մեծ է ԴԴ- ի զարգացման հավանականությունը:Ճիշտ վերահսկողությունը նվազեցնում է ՇԴ –ի զարգացման տարեկան մակարդակը և երկարացնում է կյանքի տևողությունը նվազեցնելով սիրտանոթային հիվանդությունների առաջացումը:Այնուամենայնիվ շաքարի մակարդակի ճիշտ վերահսկողությունն անգամ չի կարող անվերապահորեն կանխել ԴԴ –ի զարգացումը, ուստի ՇԴ –ով յուրաքանչյուր պացիենտի վիճակը վտանգված է:

Ընդհանուր առմամբ ԴԴ-ի տարածվածությունը հասարակության մեջ պայմանավորված է նաև ՇԴ –ով պացիենտների վաղ հայտնաբերման հետ:

- Լիարժեք ռեսուրսներ ունեցող առողջապահական համակարգի շնորհիվ հետազոտման ընթացքում ավելի շատ պացիենտներ են հայտնաբերվում ՇԴ –ի վաղ փուլերում ,ինչն էլ նվազեցնում է ԴԴ –ի դրսևորման գերակշռությունը:
- Առողջապահական համակարգի ավելի պակաս ռեսուրսների դեպքում ավելի քիչ պացիենտներ են հայտնաբերվում ՇԴ –ի վաղ փուլում,որովհետև սկզբնական շրջանում այն ընթանում է առանց ախտանիշների, և ՇԴ –ը ախտորոշվում է միայն բարդությունների կամ հիվանդության այլ ախտանիշների առկայության դեպքում, ուստի ԴԴ-ով պացիենտների քանակն էլ կլինի ավելի բարձր:

**Ստորև ներկայացվում է ՀՀԱՆ վիճակագրական տվյալները ՀՀ դիաբետիկ
ռետինոպաթիայով հիվանդների համար**

**ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԽՏՈՐՈՇՎԱԾ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(15 տարեկան և բարձր)**

Հիվանդություններ	ՀՄ Դ 10 *	Գրանցված են հիվանդություններ (բացարձակ թվեր)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	A00 - T98	68886 8	41609 1	33333 2	42580 6	60539 5	61390 1	61333 3	63636 0
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10, E11	4546	1825	2792	5439	7052	8322	7984	8709

**ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԽՏՈՐՈՇՎԱԾ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(15 տարեկան և բարձր)**

Գրանցված են հիվանդություններ (100 000 բնակչի հաշվով)								Հիվանդություններ
1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015	
27827. 4	15496. 9	11470. 9	16781. 9	22742. 1	25069. 5	25191. 3	26307. 8	ԸՆԴԱՄԵՆԸ
								այդ թվում
183.6	68	96.1	214.4	264.9	339.8	327.9	360	Շաքարային դիաբետ

ՀՀ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԽՏՈՐՈՇՎԱԾ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(0-14 տարեկան երեխաներ)

Հիվանդություններ	ՀՄ Դ 10 *	Գրանցված են հիվանդություններ (բացարձակ թվեր)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	A00	54201	32822	26068	21172	30572	30374	30086	29346 8
	- T98	2	1	3	8	9	5	1	
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10, E11	47	49	42	83	47	54	68	41

ՀՀ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԽՏՈՐՈՇՎԱԾ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(0-14 տարեկան երեխաներ)

Հիվանդություններ	ՀՄ Դ 10 *	Գրանցված են հիվանդություններ (100 000 բնակչի հաշվով)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	A00	50061.	3053	29061.	31127.	51460.	52991.	51953.	50105. 5
	- T98	1	5	6	3	9	1	2	
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10. E11	4.4	4.6	4.7	12.2	7.9	9.4	11.7	7

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ

(15 տարեկան և բարձր)

Հիվանդություններ	ՀՄԴ 10 *	Գրանցված են հիվանդություններ (բացարձակ թվեր)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	A00	155128	96509	74207	81102	111720	12085	12280	12724 57
	- T98	9	9	4	4	3	20	39	
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10. E11	35500	36234	3868 5	3998 2	54741	67847	71955	77087

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ

(15 տարեկան և բարձր)

Հիվանդություններ	ՀՄԴ 10 *	Գրանցված են հիվանդություններ (100 000 բնակչի հաշվով)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	A00- T98	62665	35944.1	25536.8	31964.1	41968.6	49351.5	50439	52604.8
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10. E11	1434.1	1349.5	1331.3	1575.8	2056.4	2770.6	2955.4	3186.9

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ

(0-14 տարեկան երեխաներ)

Հիվանդություններ	ՀՄԴ 10 *	Գրանցված են հիվանդություններ (բացարձակ թվեր)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵԼԸ	A00- T98	850249	463694	317721	264191	364396	367708	362920	358000
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10. E11	197	207	160	220	231	284	248	248

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆ

(0-14 տարեկան երեխաներ)

Հիվանդություններ	ՀՄ Դ 10 *	Գրանցված են հիվանդություններ (100 000 բնակչի հաշվով)							
		1990	1995	2000	2005	2010	2013	2014	2015
ԸՆԴԱՄԵԼԸ	A00 - T98	78530 .4	43138 .3	35420 .4	38840 .2	61335. 8	6415 0	62669 .7	60146 .7
այդ թվում									
Շաքարային դիաբետ	E10. E11	18.2	19.3	17.8	32.3	38.9	49.5	42.8	37.6

Ռիսկի գործոններ

Դիաբետի տևողությունը հանդիսանում է ԴԴ-ի զարգացման ամենամեծ ռիսկի գործոնը: I տիպով պացիենտների 25%-ի մոտ ԴԴ-ն զարգանում է 5 տարի անց:10

տարի անց մոտ 60 %-ի մոտ հայտնաբերվում է ԴԴ: 15 տարի անց 80 %-ի մոտ: Ըստ Wisconsin Epidemiologic Study of Diabetic Retinopathy (WESDR)-ի մինչև 30 տարեկան 20 տարուց ավել I տիպի դիաբետով տառապող պացիենտների 50%-ի մոտ առկա է տեսողության իջեցումով ընթացող ռետինոպաթիա: II տիպի դիաբետով տառապող 30տ-ից բարձր անձանց մոտ ,որոնց ՇԴ-ի տևողությունը չի գերազանցում 5 տարին,ԴԴ-ն զարգանում է ինսուլին ստացող պացիենտների 40 %-ի մոտ և չստացողների՝ 20 %-ի մոտ:Այս տվյալները աճում են համապատասխանաբար մինչև 84 %-ի և 53 %-ի մոտ,երբ դիաբետի տևողությունը չի գերազանցում 19 տարին:ԴԴ-ի զարգացման ամենամեծ ռիսկի գործոնը կախված է արյան մեջ գլյուկոզայի մակարդակի վերահսկողությունից:ԴԴ-ի զարգացման հիմնական ռիսկի գործոններն են հանդիսանում ՇԴ-ի տևողությունը և հիպերգլիկեմիայի ծանրության աստիճանը:Եթե արդեն իսկ առկա է ԴԴ,ապա ԴԴ-ի տևողությունը ավելի քիչ դեր է խաղում,քան գլյուկոզայի բարձր մակարդակը՝ հիվանդության պրոգրեսիվման մեջ: Խորհուրդ է տրվում HbA1c- 7%-ից ցածր պահել ,իսկ որոշ պացիենտների մոտ՝6.5%-ից: (1A) Հիպերտենզիայի ինտենսիվ վերահսկողությունը բերում է ԴԴ-ի պրոգրեսիայի նվազմանը:

Արյան մեջ խոլեստերինի մակարդակի կարգավորումը ևս դանդաղեցնում է ԴԴ-ի պրոգրեսիվումը:

Այլ ռիսկի գործոններն են՝ տարիքը,դիաբետի տիպը,արյան մեջ մակարդեղիության գործոնները,երիկամային հիվանդությունը,ֆիզիկական պասիվ կենսակերպը:

Կլինիկական պատկեր

ԴԴ –ի ժամանակ ցանցաթաղանթի դասական ախտահարումներից են միկրոանևրիզմաները, արյունազեղումները, երակների տրամաչափի փոփոխությունները (պայմանավորված վերջիններիս տրամաչափի փոփոխություններով՝ իրար հաջորդող լայնացումներով և նեղացումներով) ինտրառետինալ միկրովասկուլյար անականոնությունները, կոշտ

էքսուդատները(լիպիդային դեպոզիտներ), փափուկ բամբականման էքսուդատները(գանգլիոնար բջիջների աքսոնների շերտում ցանցենու իշեմիայի հետևանքով առաջացած աքսոպլազմատիկ կուտակումներ) և ցանցենու նորագոյացած անոթավորումը:Այս ամենի հիման վրա էլ կատարվում է ԴԲ –ի երկու հիմնական ձևերի դասակարգումը

Ոչ պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա(ՈՊԴԲ)

Ոչ պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա(ՈՊԴԲ)-ի ժամանակ նորագոյացած անոթներ դեռևս չկան, սակայն առկա են ԴԲ –ի այլ դրսևորումները: Դրանից ելնելով տարբերում ենք թեթև, չափավոր և ծանր արտահայտված ՈՊԴԲ: ԴԲ –ի ծանրության աստիճանի հստակ տարբերակումը թույլ է տալիս կանխատեսել ԴԲ –ի զարգացման պրոգրեսիվումը, տեսողության կորստի հավանականությունը,ինչպես նաև առաջարկել համապատասխան բուժում , որն իր մեջ ներառում է հիվանդի հաջորդական այցերի ժամանականացույցը:

Պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիա(ՊԴԲ)

Պրոլիֆերատիվ դիաբետիկ ռետինոպաթիան(ՊԴԲ) հանդիսանում է ԴԲ –ի առավել զարգացած փուլը և ներկայացնում է ցանցենու անոթային պատասխանը ծավալուն իշեմիայի տեսքով ` մազանոթների խցանման հետևանքով: Շատ տիպիկ է նորագոյացած անոթների առկայությունը հատկապես ՏՆՍ –ի շրջանում(NVD) կամ այլ հատվածում (NVE) անոթային արկադաների ընթացքով: Վերջինս հաճախ ի հայտ է գալիս ցանցենու սնուցում ստացող և չսնուցվող հատվածների շրջանում: Հավելված Աղյուսակ 2 –ը ներառում է ՊԴԲ –ի նշանները

ԴԲ ի փուլերը՝ ոչ պրոլիֆերատիվից մինչև պրոլիֆերատիվ ,ներկայացված են Աղյուսակ 1 –ում, հիմնվելով ԴԲ –ի միջազգային դասակարգման հիման վրա:

Դիաբետիկ մակույար այտուց

Դիաբետիկ մակույար այտուցը (ԴՄԱ)-հանդիսանում է դիաբետիկ ռետինոպաթիայի կարևորագույն բարդություններից մեկը,որը կարող է դրսևորվել անկախ ռետինոպաթիայի փուլերից,քանի որ այն հայտնաբերվում է ռետինոպաթիայի

տարբեր ծանրության փուլերի դեպքում և կարող է նաև ընթանալ առանձին: Ներկայումս ԴԴ-ն դասակարգվում է ըստ մակույար այտուցի բացակայության, առանց կենտրոնական ներգրավման կամ կենտրոնական ներգրավմամբ ԴՄԱ: ԴՄԱ –ի տարբերակումը ըստ ծանրության հիմնված է այս երեք աստիճանի վրա , որից էլ կախված որոշվում է բուժման և հետևելու ընթացակարգը:

ԴԴ –ի փուլերը որոշվում են ելնելով ԴԴ –ի Միջազգային Դասակարգման Սանդղակից ,որը ներկայացված է Աղյուսակ 1 –ում: Ելնելով այս դասակարգումից ներկայացվում են նաև երկու այլ աղյուսակներ , որոնք հիմնված են ավելի բարձր ռեսուրսների չափորոշիչների հիման վրա(Աղյուսակ 2ա) կամ ավելի ցածր /միջանկյալ/ չափորոշիչների հիման վրա: Կարևոր է հիշել որ ԴԴ –ի և ԴՄԱ –ի զարգացած փուլերը կարող են հայտնաբերվել անգամ այն հիվանդների մոտ, որոնք դեռևս տեսողության գանգատ չեն ներկայացնում:

Աղյուսակ 1. Դիաբետիկ Ռետինոպաթիայի և Դիաբետիկ Մակույար Այտուցի Միջազգային դասակարգում

Դիաբետիկ Ռետինոպաթիա	Լայն բբով օֆթալմոսկոպիայի ժամանակ հայտնաբերվող փոփոխությունները
ԴԴ –ի բացակայություն	Փոփոխություն չի հայտնաբերվում
Թերևս արտահայտված ՈՊԴԴ	Առկա են միայն միկրոանևրիզմաներ
Չափավոր արտահայտված ՈՊԴԴ	Միկրոանևրիզմաներ և այլ փոփոխություններ(կետային և գծային արյունազեղումներ,կոշտ էքսուդատներ,փափուկ էքսուդատներ),բայց ավելի քիչ արտահայտված քան ծանրի ժամանակ
Ծանր արտահայտված	Չափավոր արտահայտված ԴԴ հետևյալ

<p>ՈՊԴԴ</p>	<p>դրսևորումներից որևէ մեկի հետ Ինտրառետինալ արյունազեղումներ(1 կվադրանտում 20-ից ավելի) *երակների համրիչանման փոփոխություններ (2 կվադրանտում) *Ինտրառետինալ միկրովասկուլյար անկանոնություններ (1 կվադրանտում) *պրոլիֆերատիվ ռետինոպաթիայի նշանների բացակայություն</p>
<p>Պրոլիֆերատիվ ԴԴ</p>	<p>Խիստ արտահայտված ոչ պրոլիֆերատիվ ԴԴ և հետևյալ ախտանիշներից որևէ մեկը * նեովասկուլյարիզացիա *պրեռետինալ արյունազեղում կամ արյունազեղում ապակեմնան մարմնի մեջ</p>

<p>Դիաբետիկ Մակուլյար Այտուց</p>	<p>Լայն բբով օֆթալմոսկոպիայի ժամանակ հայտնաբերվող փոփոխությունները</p>
<p>ԴՄԱ –ի բացակայություն</p>	<p>Մակուլայի շրջանում բացակայում են նրա հաստացումը կամ կոշտ էքսուդատներ</p>
<p>Ոչ կենտրոնական ներգրավմամբ ԴՄԱ</p>	<p>Ցանցենու հաստացումը մակուլայի շրջանում չի ընդգրկում կենտրոնական հատվածը, որն ունի 1 մմ տրամագիծ</p>
<p>Կենտրոնական ներգրավմամբ ԴՄԱ</p>	<p>Առկա է մակուլայի հաստացում ` կենտրոնական հատվածի ընդգրկումով, որն ունի 1 մմ տրամագիծ</p>

*Կոշտ էքսուդատները ընթացիկ կամ նախորդած մակուլյար այտուցի վկայությունն են: ԴՄԱ –ը ընկալվում է որպես ցանցենու հաստացում և պահանջում է եռաչափ գնահատում,որը լավագույն ձևով կարելի է հայտնաբերել լայն բբով բիոմիկրոֆթալմոսկոպիայի կամ ակնահատակի ստերեոֆոտոլուսանկարչության միջոցով:

Աղյուսակ 2ա. Դիաբետիկ Ռետինոպաթիայի և Դիաբետիկ Մակուլյար Այտուցի Միջազգային Դասակարգման վրա հիմնված հիվանդների կրկնակի այցերի և հանձնարարականների սխեմա բարձր ռեսուրսների չափորոշիչների հիման վրա

Դիաբետիկ Ռետինոպաթիա (ԴՌ)		
Դասակարգումը	Կրկնակի այցի կամ հերթական գրաֆիկ զննման	Հանձնարարական ակնաբույժին
ԴՌ –ի բացակայություն, թեթև արտահայտված ԴՌ և ԴՄԱ –ի բացակայություն	Կրկնակի զննում 1-2 տարվա ընթացքում	Հանձնարարական չկա
Թեթև արտահայտված ԴՌ	6-12 ամիսը մեկ	Հանձնարարական չկա
Չափավոր արտահայտված ԴՌ	3-6 ամիսը մեկ	Պահանջվում է հանձնարարական
Խիստ արտահայտված ՈՊԴՌ	3 ամսից շուտ	Պահանջվում է հանձնարարական
Պրոլիֆերատիվ ԴՌ	1 ամսից շուտ	Պահանջվում է հանձնարարական
Դիաբետիկ Մակուլյար Այտուց (ԴՄԱ)		

Ոչ կենտրոնական ընդգրկումով ԴՄԱ	3 ամիսը մեկ	Պահանջվում է հանձնարարական
Կենտրոնական ընդգրկումով ԴՄԱ	1 ամիսը մեկ	Պահանջվում է հանձնարարական

*Այն դեպքերում, երբ դիաբետը վերահսկվում է

Աղյուսակ 2բ. **Դիաբետիկ Ռետինոպաթիայի և Դիաբետիկ Մակուլյար Այտուցի Միջազգային Դասակարգման վրա հիմնված հիվանդների կրկնակի այցերի և հանձնարարականների սխեմա միջին ռեսուրսների չափորոշիչների հիման վրա**

Դիաբետիկ Ռետինոպաթիա (ԴՌ)		
Դասակարգումը	Կրկնակի այցի կամ հերթական զննման գրաֆիկ	Հանձնարարական ակնաբույժին
ԴՌ –ի բացակայություն, թերթև արտահայտված ՈՊԴՌ և ԴՄԱ –ի բացակայություն	Կրկնակի զննում 1-2 տարվա ընթացքում	Հանձնարարական չկա
Թերթև արտահայտված ՈՊԴՌ	1-2 տարի	Հանձնարարական չկա
Չափավոր արտահայտված ՈՊԴՌ	6-12 ամիսը մեկ	Պահանջվում է հանձնարարական
Խիստ արտահայտված ՈՊԴՌ	3 ամսից շուտ	Պահանջվում է հանձնարարական
Պրոլիֆերատիվ ԴՌ	1 ամսից շուտ	Պահանջվում է հանձնարարական
Դիաբետիկ Մակուլյար Այտուց (ԴՄԱ)		
Ոչ կենտրոնական	3 ամիսը մեկ	Հանձնարարական չի

ներգրավմամբ ԴՄԱ		պահանջվում (պահանջվում է հանձնարարական եթե կա ֆոտոլազերկոագուլյացիայի հնարավորություն)
Կենտրոնական ներգրավմամբ ԴՄԱ	1 ամիսը մեկ	Պահանջվում է հանձնարարական

*Այն դեպքերում, երբ դիաբետը վերահսկվում է

Դիաբետիկ ռետինոպաթիայի մշտադիտարկումը (Սկրինինգ)

ԴԴ –ի սկրինինգը հանդիսանում է շաքարային դիաբետի բուժման կարևորագույն ասպեկտը ամբողջ աշխարհում: Նույնիսկ բավարար քանակով ակնաբույժների առկայության պարագայում ՇԴ –ով յուրաքանչյուր պացիենտի զննումը պահանջում է ռեսուրսների ապարդյուն վատնում:

ՇԴ –ով պացիենտների զննումը պետք է ներառի լիարժեք ակնաբուժական հետազոտում՝ տեսողության սրության շտկումից մինչև ակնահատակի նկարահանումը: Այնուամենայնիվ հետազոտման միջին ռեսուրսների առկայության պարագայում, համապատասխան հանձնարարական տալու համար անհրաժեշտ է կատարել տեսողության սրության և ակնահատակի զննում ՇԴ –ի գործող դասակարգման համաձայն: Տեսողության ստուգումը պետք է նախորդի բբի լայնացմանը:

Օժանդակ Աղյուսակ 1-ն արտացոլում է ԴԴ –ով պացիենտի զննման պրոցեսը: Տեսողության սրության ստուգումը պետք է իրականացվի վերապատրաստված բուժ. անձնակազմի կողմից՝ կախված առկա ռեսուրսների առկայությունից

- Տեսողության սրության ստուգումը համապատասխան շտկումով՝ օգտագործելով բարձր կոնտրաստով տեսողության սրության ստուգման աղյուսակներ 5 մ հեռավորության վրա
- Տեսողության սրության ստուգումը մոտի և հեռվի համար նախատեսված աղյուսակների միջոցով, ինչպես նաև անցքի (pin-hole) կիրառումը ցածր տեսողության սրության ժամանակ
- Տեսողության սրության ստուգման իրականացումը 6/12 կամ 20/40 ձեռքի աղյուսակներով, որը բաղկացած է առնվազն 5 տառից կամ սիմվոլից և անցքի (pin-hole) կիրառումը ցածր տեսողության սրության ժամանակ

Ցանցաթաղանթի հետազոտությունն իրականացվում է հետևյալ կերպ

*ցանցաթաղանթի զննում ուղիղ կամ անուղղակի օֆթալմոսկոպիայի միջոցով, կամ բիոմիկրոսկոպիայի միջոցով

*ակնահատակի ֆոտոլուսանկարահանում(կիրառելով հետևյալ մեթոդներից որևէ մեկը՝ 30 * ոսպնյակի, մոնո կամ ստերեո նկարահանում, նեղ կամ լայն բբով): Սա կարող է իրականացվել առանց կամ օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիայի (OCT) հետ միասին: Կարող է ներառել նաև տելե բժշկական մոտեցումներ:

*Ցանցաթաղանթի զննման համար բժշկի կոչման աստիճանը նշանակություն չունի, սակայն հետազոտողը պետք է լավ տիրապետի օֆթալմոսկոպիային և ցանցենու ֆոտոլուսանկարահանմանը, որպեսզի կարողանա ճիշտ ախտորոշել ԴԴ –ի դրսևորման աստիճանը:

Ելնելով ցանցենու հետազոտման և տեսողության սրության ստուգման արդյունքներից, ակնաբույժը մշակում է բուժման համապատասխան պլան, ինչպես ցուցադրված է Աղյուսակ 2ա. և Աղյուսակ 2բ. –ում: Այն կարող է փոփոխության ենթարկվել ելնելով պացիենտի անհատական պահանջներից:

Ցանցենու պատկերի ճիշտ գնահատման համար պետք է անպայման հետազոտվի ակնաբույժի մոտ քանի դեռ առկա չէ ԴԴ, կամ առկա է թեթև ձևը(միայն

միկրոանևրիզմաներ են),իսկ այն պացիենտների մոտ, որոնց մոտ առկա է տեսողության սրության անհամապատասխանություն ականահատակի պատկերին, անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություններ իրականացնել:

Պացիենտներին հետազոտելիս անպայման պետք է հարցնել նրանց մոտ արյան մեջ շաքարի մակարդակի,արյան ճնշման, լիպիդների մակարդակի մասին, իսկ կանանց՝ նաև հղիության առկայության մասին: Այս ամենի անհամապատասխան վերահսկողությունը և հղիությունը կարող են պահանջել լրացուցիչ բժշկական միջամտության անհրաժեշտություն:

Հանձնարարականի Ուղեցույցներ

Նվազագույն հանձնարարական ուղեցույցները հետևյալ են՝

I.Տեսողության սրությունը 6/12 կամ 20/40 –ից պակաս կամ առկա են տեսողության սրության սիմպտոմատիկ գանգատներ

II.Եթե հնարավոր է ԴԴ –ի վիճակը դասակարգել համապատասխան ԴԴ – միջազգային դասակարգմանը (Աղյուսակ 1), ապա համապատասխանաբար կկիրառվեն(Աղյուսակ 2ա և (Աղյուսակ 2բ)

III. Եթե տեսողության սրությունը կամ ցանցաթաղանթի վիճակը հնարավոր չէ պարզել սկրինինգի ժամանակ,ապա հարկավոր է դիմել ակնաբույժին

Դիբետիկ Ռետինոպաթիայի մանրամասն ակնաբուժական գնահատում

1.Հիվանդի նախնական գնահատումը

Հիվանդի մանրակրկիտ գնահատումը պետք է ներառի ամբողջական ակնաբուժական փորձաքննություն,ներառյալ տեսողության սրության որոշումը, ԴԴ –ի ծանրության աստիճանի որոշումը և ԴՄԱ –ի առկայությունը յուրաքանչյուր աչքում: Այն պետք է ներառի նաև հիվանդի շաքարային պատմությունը:

2. Հիվանդության պատմությունը (Հիմնական տարրերը)

*Դիաբետի տևողությունը

*անցյալ գլիկեմիկ վերահսկողությունը (A1c հեմոգլոբինի որոշում)

* դեղորայքը (հատկապես ինսուլին կամ պերօրալ հիպոգլիկեմիկ դեղորայք, հակահիպերտենզիվներ, լիպիդների քանակը պակասեցնող դեղորայք)

* համակարգային պատմությունը (երիկամային հիվանդություն, համակարգային հիպերտենզիա, լիպիդների բարձր մակարդակ, հղիություն)

* ակնային պատմությունը

3. Նախնական ֆիզիկական զննում (Հիմնական տարրերը)

* տեսողության սրությունը

* ներակնային ճնշման չափումը (ՆԱՃ)

* գոնիոսկոպիա, եթե կա դրա անհրաժեշտությունը (առկա է

ծիածանաթաղանթի

ներվասկուլյարիզացիա, կամ ՆԱՃ –ը բարձր է)

* բիոմիկրոսկոպիա ճեղքային լամպով

* ակնահատակի զննում

4. Ակնահատակի հետազոտման մեթոդները

Ներկայումս ԴԴ –ի հայտնաբերման ամենազգայուն երկու մեթոդներն են հանդիսանում ակնահատակի ֆոտոնկարահանումը և բիոմիկրոսկոպիան ճեղքային լամպով՝ լայնացրած բբի պայմաններում: Երկու մեթոդների վերծանումն էլ կախված են այն իրականացնող մասնագետների պրոֆեսիոնալիզմից: Մյուս մեթոդները ներկայացված են Օժանդակ Աղյուսակ 3-ում :

Ակնահատակի ֆոտոնկարահանումը ունի այն առավելությունը, որ այն թույլ է տալիս ունենալ ակնահատակի պատկերի մշտական գրանցում, ուստի և համարվում է նախընտրելի մեթոդ վերջինիս վիճակի գնահատման համար: Այնուամենայնիվ լավ պատրաստված մասնագետները կարող են տարբերակել ԴԴ –ի աստիճանը առանց ֆոտոլուսանկարահանման և շատ դեպքերում, դա հենց հետազոտողի ընտրության հարցն է:

Այս գործիքային հետազոտությունները պահանջում են որոշակի հմտություններ , բայց ավելի մեծ հմտություն է պահանջվում անուղղակի օֆթալմոսկոպիայի և ճեղքային

լամպով հետազոտելու համար: Աչքի ներսում եղած պղտորումները կարող են ազդել ստացված նկարների որակի վրա, ուստի այն ևս պետք իրականացվի վերապատրաստված մասնագետների կողմից:

Դիաբետիկ Ռետինոպաթիայով Հիվանդների Չննման Հետևողականությունը Ընդհանուր առմամբ հիվանդի հետևողականության պատմությունը և զննումը պետք է նման լինի նախնական քննությանը: Տեսողական ախտանիշների, տեսողության սրության, ՆԱՃ –ն և ակնահատակի զննման տվյալների գնահատումը կարևոր են:

1. Հետևողականության պատմությունը

- * տեսողական ախտանիշները
- * գլիկեմիկ ստատուսը (A1c հեմոգլոբինի որոշում)
- * համակարգային պատմությունը (երիկամային հիվանդություն, համակարգային հիպերտենզիա, լիպիդների բարձր մակարդակ, հղիություն)

2. Հետևողականության ֆիզիկական քննությունը

- * տեսողության սրությունը
- * ներակնային ճնշման չափումը (ՆԱՃ)
- * գոնիոսկոպիա, եթե կա դրա անհրաժեշտությունը (առկա է

ծիածանաթաղանթի

- նեոլասկուլյարիզացիա, կամ ՆԱՃ –ը բարձր է)
- * բիոմիկրոսկոպիա ճեղքային լամպով
- * ակնահատակի զննում

3. Օժանդակ թեստեր(բարձր ռեսուրսների չափորոշիչներ)

- * ՕԿՏ –ն հանդիսանում է ԴՄԱ –ի հայտնաբերման ամենազգայուն մեթոդը: ՕԿՏ –ն ապահովում է ԴՄԱ –ի քանակական գնահատականը ԴՄԱ –ի

արտահայտվածության աստիճանը որոշելու համար: Ցանցաթաղանթի քարտեզը

ցույց է տալիս ցանցաթաղանթի հաստացման հատվածները; մեկ նկարը թույլ է տալիս

մանրամասնել ԴՄԱ –ի տեսակը՝ դիֆուզ ,կիստոզ այտուցը, սուբոնտինալ հեղուկի/ շերտազատման առկայությունը , վիտրեոռետինալ տրակցիաներ առկայությունը

* Ակնահատակի ֆոտոկարահանումը օգտակար է հիվանդության ակտիվության

գնահատման համար: Այն թույլ է տալիս մանրամասն պարզաբանել հիվանդության

ընթացքը:

* Ֆյուորեսցենտային անգիոգրաֆիան չի կիրառվում ԴԴ –ի, պրոլիֆերատիվ ԴԴ –ի և

մակուլյար այտուցի ախտորոշման համար, դրանք ախտորոշվում են ակնահատակի

զննության միջոցով

* Ֆյուորեսցենտային անգիոգրաֆիան թույլ է տալիս հայտնաբերել ցանցաթաղանթի

արյունամատակարարման խանգարումով օջախները, ցանցաթաղանթի

նեովասկուլյարիզացիայի օջախների , միկրոանևրիզմաների առկայությունը:

4. Հիվանդի Ուսուցումը

* Քննարկել հետազոտման արդյունքները

* Խրառուել ՇԴ –ով հիվանդներն ,որոնք չունեն ԴԴ,ակնահատակի տարեկան զննումներ անցնել

* Տեղեկացնել հիվանդներին, որ ԴԴ –ի բուժման արդյունավետությունը, անկախ տեսողության սրության տվյալներից և ակնային ախտանիշներից, կախված է

ժամանակին կատարված միջամտությունից

* բացատրել հիվանդներին արյան մեջ շաքարի մակարդակը, արյան ճնշման և լիպիդների մակարդակը նորմային մոտ պահելու անհրաժեշտության մասին:

* կապ հաստատել ընդհանուր բժշկի(ընտանեկան բժիշկ, էնդոկրինոլոգի) հետ տեղեկացնելով աչքի վիճակի մասին

* Ապահովել վիրահատության կարիք ունեցող, սակայն վատ պայմաններում գտնվող

հիվանդների մասնագիտական աջակցությունը (հրավիրել խորհրդատվություն, վերականգնողական կամ սոցիալական ծառայության աշխատակիցներին)

- Տեղեկանալ տեսողության սրության վատացումով հիվանդների մասին և կապ հաստատել սոցիալական ծառայության աշխատակիցների հետ
- Տեղեկանալ բուժում ստացած հիվանդների մասին , այդ թվում պանոետինալ

Ֆոտոլագերկոագուլյացիա ստացած և վիրահատվածների, որոնք պարբերաբար պետք է հետազոտվեն

Աղյուսակ 3 ա. Դիաբետիկ Ռետինոպաթիայով հիվանդների վարման և հետևողականության գրաֆիկ բարձր ռեսուրսների չափորոշիչների հիման վրա

Դիաբետիկ ռետինոպաթիայի ծանրության աստիճանը	Վարման հետևողականությունը ակնաբույժների կողմից
ԴԲ –ի բացակայություն I տիպ II տիպ	Կրկնակի զննում 1-2 տարվա ընթացքում, ակնաբույժի կողմից կրկնակի զննման կարիք կարող է չլինել,սակայն լինելու դեպքում ցուցված է լայն բբով հետազոտություն կամ ակնահատակի ֆոտոնկար
Թերևս արտահայտված ՈՊԴԲ	6-12 ամիս, ակնաբույժի կողմից կրկնակի զննման կարիք կարող է չլինել

Չափավոր արտահայտված ՈՊԴԴ	3-6 ամիս
Ծանր արտահայտված ՈՊԴԴ	3 ամսից շուտ, մտածել վաղ պանոնտինալ ֆոտոլազերկոագուլյացիայի մասին
Պրոլիֆերատիվ ԴԴ	1 ամսից շուտ, մտածել պանոնտինալ ֆոտոլազերկոագուլյացիայի մասին
Կայուն (բուժված) ՊԴԴ	6-12 ամիս
Դիաբետիկ Մակուլյար Այտուցի ծանրության աստիճանը	Վարման հետևողականությունը ակնաբույժների կողմից
Ոչ կենտրոնական ընդգրկումով ԴՄԱ	3-6 ամիս, մտածել ֆոկալ ֆոտոլազերկոագուլյացիայի մասին
Կենտրոնական ընդգրկումով ԴՄԱ	1-3 ամիս, մտածել ֆոկալ ֆոտոլազերկոագուլյացիայի կամ հակա - VEGF թերապիայի մասին
Կայուն ԴՄԱ	3-6 ամիս

Աղյուսակ 3 բ . Դիաբետիկ Ռետինոպաթիայով հիվանդների վարման և հետևողականության գրաֆիկ միջին ռեսուրսների չափորոշիչների հիման վրա

Դիաբետիկ ռետինոպաթիայի ծանրության աստիճանը	Վարման հետևողականությունը ակնաբույժների կողմից
ԴԴ –ի բացակայություն	Կրկնակի զննում 1-2 տարվա ընթացքում, ակնաբույժի կողմից կրկնակի զննման կարիք կարող է չլինել
Թեթև արտահայտված ՈՊԴԴ	1-2 տարի , ակնաբույժի կողմից կրկնակի զննման կարիք կարող է չլինել
Չափավոր արտահայտված ՈՊԴԴ	6-12 ամիս
Ծանր արտահայտված ՈՊԴԴ	3 ամսից շուտ
Պրոլիֆերատիվ ԴԴ	1 ամսից շուտ, մտածել պանոնտինալ

	Ֆոտոլազերկոագուլյացիայի մասին
Կայուն (բուժված) ՈԴԴ	6-12 ամիս
Դիաբետիկ Մակուլյար Այտուցի ծանրության աստիճանը	Վարման հետևողականությունը ակնաբույժների կողմից
Ոչ կենտրոնական ընդգրկումով ԴՄԱ	3-6 ամիս
Կենտրոնական ընդգրկումով ԴՄԱ	1-3 ամիս, մտածել ֆոկալ ֆոտոլազերկոագուլյացիայի կամ հակա - VEGF թերապիայի մասին
Կայուն ԴՄԱ	3-6 ամիս

ԴԻԱԲԵՏԻԿ ՌԵՏԻՆՈՊԱԹԻԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Հիմնական մոտեցումները

I. Օպտիմալ բուժում

- Բարելավել գլիկոլիզացված հեմոգլոբինը. հսկողություն , եթե HbA1c > 58 մմոլ/մոլ (> 7,5 %) (1A)
- Կարգավորել զարկերակային հիպերտենզիան և դիսլիպիդեմիան

II. Դիաբետիկ ռետինոպաթիան բացակայում է, սկսվող կամ չափավոր արտահայտված համարվում է ՈԴԴԴ

- Հսկողություն – լայն բբով ակնահատակի զննում և ակնահատակի ֆոտոներ անհրաժեշտության դեպքում նշված ժամանակահատվածներում
- Բուժել ԴՄԱ անհրաժեշտության դեպքում
- ՖԼԿ չափավոր և խիստ արտահայտված ՈԴԴԴ-ի ժամանակ

III. Ծանր արտահայտված ՈԴԴԴ

- Դինամիկ հսկողություն ՈԴԴԴ-կանխելու համար
- ՊԴԱՌՊ-ի բարձր ռիսկ ունեցողների համար, կատարել ՊՖԼԿ

- Հղիությունը և կատարակտայի վիրահատությունը նույնպես ՊՖԼԿ-ի ցուցում կարող են լինել ծանր արտահայտված ՈՊԴԴ-ի ժամանակ

IV. ՊԴԴԴ

- Բուժել ՊՖԼԿ-ի միջոցով
- Գոյություն ունի կլինիկական փորձարկումների ապացույց,որ հակա ԱԷԱԳԸ(antiVEGF) պրեարատների կիրառումը բավականին ապահով և արդյունավետ է ցանցաթաղանթի այլ տեղերի նորագոյացած անոթների դեպքում՝մին.2 տարի:

Պաննետինալ ֆոտոլազերկոագուլյացիայի (ՊՖԼԿ)

I. Բանակցություններ հիվանդների հետ մինչև բուժումը

- Հիվանդները սովորաբար կարիք ունեն բազմակի այցերի և կարող է պահանջվել լրացուցիչ լազերային բուժում
- ՊՖԼԿ նվազեցնում է տեսողության կորուստը և կուրությունը
- Անկախ նրանից ,որ ՊՖԼԿ –ն արդյունավետ է ,որոշ հիվանդների մոտ կարող է առաջանալ ապակենման մարմնում արյունազեղումներ ,դա կարող է նշանակել,որ հիվանդը կարող է կարիք ունենալ վիրահատության
- ՊՖԼԿ-ն հաճախ նվազեցնում է պերիֆերիկ և մթնշաղային տեսողությունը,բուժումը կարող է ժամանակավորապես նվազեցնել կենտրոնական տեսողությունը

Պաննետինալ ֆոտոլազերկոագուլյացիայի (ՊՖԼԿ)-ի լինզաները

